ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա, հեռ.(ֆաքս)՝ 011 90 00 02

№ _____

«27» 01 2017թ.

„Հետք„ թերթի լրագրող
Քրիստինե Աղալարյանին

ք.Երևան, Բուզանդի 1/3, 8-րդ հարկ

Հարգելի տիկին Աղալարյան

Ի պատասխան Ձեր 27.01.2017թ. գրությանը՝ հայտնվում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քննիչը քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենն ուղարկում է կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչին, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ծանոթանալ կարճված գործի նյութերին:

Նկատի ունենալով, որ պետական հատուկ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից ձեռնարկատիրական գործունեությանն ապօրինի մասնակցելու դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածի հատկանիշներով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում հարուցված թիվ 62211616 քրեական գործով Դուք չեք հանդիսանում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասում հիշատակված անձ, ուստի քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման պատճենը և գրության մեջ նշված փաստաթղթերը չեն կարող տրամադրվել Ձեզ:

Հարգանքով՝ Մ. Օհան

ՀՀ հատուկ քննչական ծառայության
մամուլի ծառայություն